

# ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆ

## ԱՐԳԱՐՈՒԹԻՒՆ ՃՀՄԱՐՏՈՒԹԻՒՆ

Շատեր ալ, որեւէ ճշմարիտ բան լսելով, չեն ուզեր հաւատալ մինչեւ չփորձեն եւ երբ կը փորձեն, կը վկայեն՝ թէ իրենց լսածը ճշմարիտ էր, բայց վնասներ կրելով անոր կը հասնին: Անձ մը պէտք է ճշմարիտ ըլլայ, բայց այդ չի նշանակեր, որ ամէն ճշմարիտ բան պէտք է ըսէ: Բնական է ճշմարիտ մարդ փնտռելը եւ բարին ցանկանալը, որովհետեւ ճշմարիտը մտքի կարողութեան առարկան է եւ բարին կամքի, եւ ամէն կարողութեան յատուկ է բնականօրէն դիմել դէպի իր առարկան: Բայց շատերը, ճշմարիտի ու բարիի կատարեալ ճանաչումը չունենալով, շուարած կը փնտռեն ու չեն կրնար ձեռք բերել, եւ անհասանելի կը համարեն: Բայց եթէ ուշի ուշով նայինք կարող են ճանչնալ զանոնք ու ձեռք բերել, որովհետեւ անհասանելի չեն մարդոց:

Շարունակ նորանոր բաներ լսել ցանկացող մարդիկ յաճախակի կը խաբուին, որովհետեւ հետամուտ չեն ըլլար առարկայի ճշմարտութիւնը քննելուն ու ճանչնալուն:

Ճշմարտութիւնը կ'արտասուի, երբ կ'անտեսուի նենգաւորներէն ու ստախօսներէն, եւ եթէ որեւէ տեղ հաւատարիմներ ու ուղղախօսներ չգտնուէին զինք մխիթարելու՝ կը հեռանար այս աշխարհէն...

Շարունակելի

### ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ՈԳԻՆԵՐԸ, ԳԵԻԵՐԸ, ՉԱՐ ՈՒԺԵՐԸ՝ ՀՈԳԵՒՈՐ ԳԻՏԱՆԿԻՆԷՆ

#### ՆՇԱՆՆԵՐՈՒ ԵՒ ԵՐԵՒՈՅԹՆԵՐՈՒ ՄԵԿԱՐԱՆՈՒԹԻՒՆ

Այս բոլորէն ետք, հակառակ Աստուծոյ խօսքին լուրջ նախազգուշացումներուն, քրիստոնեաներուն մէջ եւս կը հանդիպինք զանազան կախարդութիւններով զբաղողներու: Այդ մասին կը վկայեն բազմաթիւ քարոզիչներ: Օրինակ, Յովհան Ոսկեբերան ըսած է. «Դուն ո՛չ միայն յուռութեան կ'օգտուիս, այլ նաեւ կախարդութեամբ կը զբաղիս, չես ամչնար պառաւններուն դիմելու, եւ զանոնք Աստուծոյ տունը կը բերես: Արդարացում չէ այն՝ որ այդ կիները քրիստոնեայ են եւ Աստուծոյ անունով կը գործեն: Ճիշդ ասոր համար կ'ատեմ զանոնք, որովհետեւ Տիրոջ անունը կը վարկաբեկեն, եւ իրենք զիրենք, քրիստոնեայ կոչելով հանդերձ՝ Աստուծոյ առջեւ զարչելի գործեր կ'ընեն»:

Յուռութեան (թախսմա) եւ այլ պահպանիչ միջոցներու դէմ պայքարը որեւէ օգուտ չտուաւ: Մինչեւ այսօր ալ անոնք կը գործածուին: Զինուորները պատերազմի ժամանակ զանազան «երկնային գրութիւններ», հմայիչներ կը կրէին, կարծելով որ անոնց շնորհիւ փամփուշտը չի դպնար իրենց, կամ թշնամիին սուրը չի խոցեր զիրենք:

Շատ շատեր յուռութեան, մատանիներ, ականջի օղեր կը կրեն, յուսալով որ անոնց միջոցաւ կը պաշտպանուին մութ ուժերէն, բնաւ իրենց միտքէն չանցընելով...

Շարունակելի

### ՀԱՍՅԷ.

ՃՐԱԳ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud, P.O.Box 80810 - Tel/Fax: 01-258300 - E-mail: jerak@live.com



### ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ



ԲՈՒ ԽՕՍԵՂ ԽՄ ՈՏԲԵՌՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽԴՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս., 119-105)

Ե. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ՝ 1 ՅՈՒՆԻՈՒՐ, 2012

ԹԻՒ 1

ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ԴՈՒԿԱՍԻ (20. 41-21.4)

### Գ.ՕՐ ՊԱՅՈՑ

#### ԿԱՂԱՆԴ ԵՒ ՏԱՐԵՄՈՒՏ 2012

Ապա Յիսուս անոնց հարցուց.

«Ի՞նչպէս կ'ըսեն թէ Քրիստոս՝ խոստացուած Փրկիչը, Դաւիթի Որդին է, երբ Դաւիթ ինքն իսկ Սաղմոսներուն գիրքին մէջ կ'ըսէ.

«Տէրը ըսաւ իմ Տիրոջս. Աջ կողմս նստէ, մինչեւ թշնամիներդ ոտքերուդ տակ դնեմ որպէս պատուանդան»:

« Եթէ Դաւիթ զայն Տէր կը կոչէ, ի՞նչպէս ուրեմն Քրիստոս անոր որդին է»:

Մինչ ամբողջ ժողովուրդը մտիկ կ'ընէր իրեն, Յիսուս իր աշակերտներուն ըսաւ. «Զգուշացէ՛ք օրէնքի ուսուցիչներէն, որոնք կը սիրեն փառաւոր պատմութեաններով շրջիլ, հրապարակներու վրայ մարդոցմէ ողջոյններ ընդունիլ, ժողովարաններու մէջ առաջին աթոռները գրաւել եւ ընթրիքներու ընթացքին՝ պատուոյ տեղերը: Մէկ կողմէ այրիներուն տուները անոնց ձեռքէն կը յափշտակեն, իսկ միւս կողմէ կեղծաւորութեամբ իրենց աղօթքը կ'երկարեն: Անոնց դատապարտութիւնը աւելի խիստ պիտի ըլլայ»:

Մինչ Յիսուս իր շուրջը կը դիտէր, տեսաւ մեծահարուստները, որոնք իրենց նուէրները կը նետէին տաճարի զանձանակին մէջ: Երբ տեսաւ նաեւ աղքատ այրի մըն ալ, որ երկու լուծայ նետեց զանձանակին մէջ, ըսաւ իր աշակերտներուն. «Վստահ գիտցէ՛ք, որ այդ աղքատ այրին բոլորէն աւելի նետեց զանձանակին մէջ: Միւսները բոլորն ալ իրենց աւելորդ գումարներէն նուիրեցին Աստուծոյ, մինչ անիկա հակառակ կարօտեալ ըլլալուն՝ իր ամբողջ ապրուստը նետեց»:

### ՀՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ

**ԲԱՐՍԵՂ ԿԵՍԱՐԱՅԻ  
ՀԱՅՐԱՊԵՏ**

Հայաստանեայց Եկեղեցւոյ սո- նացոյցին համաձայն Բարսեղ Հայրա- պետի սօնը կը գուգադիպի Կիրակի՝ 1 Յունուար, 2012-ին: Ուստի, եկէ՛ք միասնաբար մօտէն ծանօթանա՛նք Հայրապետին:

Բարսեղ Հայրապետ ծնած է 330- ին, Կեսարիա: Եղած է քրիստոնեայ պատուական ընտանիքի զաւակ: Ու- սանած է Կեսարիա, ապա Պոլիս: Բարձրագոյն ուսումը ստանալէ ետք կը վերադառնայ Կեսարիա եւ ինք- զինք կը նուիրէ վանական կեանքի: Որոշ ժամանակ այցելելէ ետք Սուր- իոյ եւ Եգիպտոսի վանական շրջա- նակները եւ Ս. Երկրի սրբավայրերը, 358-ին վերջնականապէս կը հաս- տատուի Նէօ-Կեսարիա՝ Նիքսարի շրջակայքը՝ իբրեւ մենակեաց: Սար- կաւագ կը ձեռնադրուի: Նագիան- գացի Գրիգորի հետ կը նուիրուի ա- ռաքելական քարոզութեան Պոնտոսի եւ Կապադովկիոյ գաւառներուն մէջ: Ընդառաջելով իր քաղաքի եպիսկո- պոս Եւսեբիոսի կոչին, 364-ին կը ձգէ իր ճգնարանը՝ պայքարելու համար Արիոսականութեան դէմ՝ իբրեւ օգ- նական մետրոպոլիտին:

370-ին երբ Եւսեբիոսը կը վախ- ճանի, Բարսեղը կը յաջորդէ անոր՝ իբրեւ արքեպիսկոպոս Կեսարիոյ եւ արդիւնաւոր մեծ գործունէութիւն ցոյց կու տայ: Շատ պայքարներ կ'ու- նենայ հերետիկոսներու դէմ: Ան բա- ցաւիկ կազմակերպչական յատկու- թեամբ օժտուած, պերճախօս քարո- ղիչ եւ հմուտ հոգեւորական էր:

Բացի վանքերէն, հաստատած է բազմաթիւ բարեգործական հաստա- տութիւններ՝ աղքատներու եւ հի- ւանդներու համար, դպրոցներ եւ որբանոցներ՝ մանուկներու համար:

Իր մատենագրական գործերէն նը- շանաւոր են իր գրած Ս. Պատարագը, որմէ շատ տարրեր ունի նաեւ մեր Պատարագը, «ՎԵՅՕՐԷՔԸ», որ ստեղ- ծագործութեան վեց օրերու մասին բացատրական ինը ճառեր են: Այս երկու գործերը, ինչպէս նաեւ իր բոլոր գործերը թարգմանուած են հայերէնի, սկսեալ Ոսկեդարէն, շուրջ 60 կտոր- ներ: Ծանօթ են իր մեծ աղօթքները, ո- ռոնցմէ ոմանք մինչեւ օրս ալ կը կարդացուին մեր եկեղեցւոյ մէջ մեծ տօներու ընթացքին:

**ՄԱՐԴԻԿ ԻՆՉ ԶԵՒՈՎ  
ԱՍՏՈՒԾՈՅ ԶԱՄԱԿ ԿԸ ԴԱՌՆԱՆ:**

Մարդիկ երեք ձեւով Աստուծոյ զաւակ կը դառնան.

- 1.- ՀԱԽԱՏՔՈՎ. «Իսկ զինք ընդու- նողներուն եւ իրեն հաւատացողնե- րուն իշխանութիւն տուաւ Աստուծոյ որդիներ ըլլալու» (ՅՎ. 1.12 Հմմտ. Գղ. 3.26):
- 2.- ՈՐԴԵԳՐՈՒԹԵԱՄԲ. «Ո՛չ միայն ստեղծագործութիւնը, այլ մենք եւս՝ որ Սուրբ Հոգին ստացած ենք իբրեւ Աստուծոյ պարգեւներուն երախայ- րիքը, ներքնապէս կը հեծենք՝ ակն- դէտ սպասելով որդեգրութեան, այ- սինքն մեր մարմինին փրկութեան» (Հռ. 8.23):
- 3.- ՍԻՐՈՎ. «Տեսէ՛ք թէ ինչպիսի սիրով հայրը մեզ սիրեց ուզելով, որ Աստուծոյ որդիներ կոչուինք եւ արդարեւ Աստուծոյ որդիներն ենք» (Ա. ՅՎ 3.1):

**ՃԱՆՉՆԱՆՔ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ**

**ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ**

**ՍՈՒՐԲ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ  
ԿԱՏԱՐՈՒՄԸ**

**Որո՞նք են պատարագի արա- րողութեան էական պայմանները:**

Պատարագը Քրիստոնէական Եկե- ղեցւոյ մէջ հաստատուած վաղեմի կա- նոններու եւ սովորութեան համեմատ կատարելու համար երեք էական պայ- մաններ կան.

- ա.- Ձեռնադրեալ եւ օծեալ անձ.
- բ.- Հաց ու զինին.
- գ.- Աղօթք

Ձեռնադրութեամբ եւ օծում ունե- ցող քահանայական աստիճան ունեցող եկեղեցական մը պէտք է ըլլայ պատա- րագիչը:

Մաքուր եւ զուտ ցորենի ալիւրէն չինուած թարմ հաց (բաղարջ- անխմոր) եւ անապական զինի (զուտ՝ ջուր չխառնուած):

Օրհնութեան ու սրբագործութեան քահանայական աղօթքներ, որոնք պէտք է որ հաւատքով եւ երկիւղածու- թեամբ ըսուի պատարագիչի կողմէն:

Պատարագի արարողութեան միւս մասերը հիմնուած են այս երեք պայ- մաններուն վրայ եւ կը ծառայեն խոր- հուրդին կատարումը վայելուչ եւ ար- տայայտութիւնը զգալի ընելու համար:

**Ե՞րբ հաստատուած են պատարագի արարողութեան այս վայելուչ կերպերը մեր Եկեղեցոյ մէջ:**

Սկիզբները շատ պարզ էր պա- տարագի արարողութեան կերպը. բայց հետզհետէ ճոխացաւ, մանաւանդ Ս. Ներսէս Շնորհալի հայրապետին ատեն եւ անոր ձեռքով: Ս. Յովհան Ոսկերե- րանի աղօթքները...

Շարունակելի

**ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ**

**Ի՞նչ է ԱՄԱՆՈՐԻ ՏՕՆԱԾԱՌԸ**

Պատասխան.– Ամանորը կամ Նոր տարին հայերը կը կոչեն նաեւ կաղանդ: Այս բառէն է «Կաղանչէք», որ կը նշանակէ կաղանդի առթիւ տրուած նուէր: Կաղանչէքի հասկացո- ղութիւնը կուգայ թերեւս Եդեմական պարտէզէն: Որպէս նոր դարաշրջանի սկիզբ, մեր նախահայրը ամէն ինչ որպէս նուէր ստացաւ՝ թէ կեանքը, թէ միտքը, թէ ընտանիքը: Եդեմական պարտէզին մէջ ծառ մը կար՝ Կեանց (կեանքի) ծառը, որը վաղ թէ ուշ պիտի մաշակէր Ադամ: Բայց ան նախընտրեց ուրիշ ծառ՝ իմաստութեան ծառը: Այդ ընտրութիւնով ալ կեանց ծառը դար- ձաւ ամենամատչելի եւ երանելի բաղանջ մարդկութեան համար: Մարդկութիւնը բոլոր ժամանակներուն մէջ երագեր է այդ ծառին մասին: Ամանորի տօնածառը մէկ փոքրիկ յուշ է այն նուիրական ծառին, որ կարգեց մարդկութիւնը: Այս պատճառով է, որ Քրիստոնեայ երկիրներուն մէջ այս ծառը կոչուեր է նաեւ Ծննդեան ծառ: Ծննդեան օրուն երբ նոր տարի մը կը բացուի մեր առջեւ, մենք ցանկութիւնը կ'ունենանք նորէն վերագտնելու այդ կարգած ծառը՝ կեանց ծառը: Խորհրդաւորաբար ծննդեան ծառը կապուեր է կենդանի կեանց ծառին՝ Յիսուս Քրիստոսի հետ: Այսինքն, Եդեմական պարտէզի կեանց ծառը Ամանորի տօններուն նոյնն է ծննդեան կենդանի ծառի՝ Յիսուս Քրիստոսի հետ: Եւ ինչպէս մոգերը իրենց ընծաները բերին Մանուկին առջեւ, այդպէս ալ մենք կը ձգտինք մեր ընծաները բերել Կենդանի ծառին՝ զարդարելով տօնածառը:

**ՊՕՐՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԵ  
ԵՐԱՅԵՑՑԻՆԵՐՈՒՆ ԳՐՈՒԱԾ  
ՆԱՄԱԿԵՆ  
(12. 5-17)**

Դուք նաև մոռցեք էք յորդորը որ ձեզի ուղղուած է՝ իբրև որդիներու. «Որդեակս, Տիրոջ խրատէն մի՛ վշտանար եւ մի՛ արհամարհեք զայն:

Մի՛ վհատիր երբ քեզ յանդիմանէ, որովհետեւ Տէրը երբ կը խրատէ՝ կը նշանակէ՝ թէ կը սիրէ քեզ. երբ կը պատժէ կը նշանակէ՝ թէ քեզ իբր զաւակ կ'ընդունի: Ուստի համբերութեամբ ընդունեցէ՛ք Աստուծոյ խրատը, գիտնալով որ հօր մը պէս կը վարուի ձեզի հետ: Կա՞յ զաւակ մը որ իր հօրմէն յանդիմանութիւն ստացած չըլլայ: Ընդհակառակը, եթէ Աստուած ձեզ չյանդիմանէ, ինչպէս կ'ընէ իր բոլոր սրդիներուն, կը նշանակէ թէ իր զաւակները չէք եւ խորթ էք իրեն: Մեր մարմնաւոր հայրերը երբ մեզ յանդիմանեն, կը դադրի՞նք զիրենք յարգելէ: Ո՛չ: Ուրեմն ո՛րքան աւելի եւս հնազանդ պէտք է ըլլանք հոգիներու Հօրը, որպէսզի կեանք ունենանք: Երկրաւոր հայրերը մեզ կը խրատեն միայն կարճ ժամանակ մը, իրենց ճիշտ դատած ձեռով, մինչ Աստուած կը խրատէ մեր բարիքին համար, որպէսզի հաղորդակից դառնանք իր սրբութեան: Ճիշդ է որ որեւէ յանդիմանութիւն նոյն պահուն չ'ուրախացներ, այլ կը տրտմեցնէ. բայց յետոյ՝ անով կրթուածներուն արդար կեանքի մը խաղաղութիւնը կը պարգեւէ:

Ուստի «Զօրացուցէ՛ք թուլցած ձեռքերն ու կթոտ ծունկերը» եւ ձեր կեանքի ընթացքը ուղղեցէ՛ք, որպէսզի հաւատքով տկար եղողը չգլորի, այլ ընդհակառակը՝ բժշկուի:

Զանացէ՛ք բոլորին հետ խաղաղ ապրիլ եւ վարել սուրբ կեանք մը, առանց որուն ոեւէ մէկը Տէրը պիտի չտեսնէ: Ուշադիր հսկեցէ՛ք որ ոեւէ մէկը Աստուծոյ շնորհքէն չզրկուի: Զգո՛յ՜, չըլլայ որ դառնութիւնը ձեր մէջ արմատ նետելով խոտվութեան պատճառ ըլլայ եւ շատերը Աստուծմէ հեռացնէ: Զըլլայ որ մէկը պոռնիկութեան մէջ իյնայ կամ Աստուծոյ պարգեւները արհամարհէ Եսաւին պէս, որ կերակուրի մը համար իր անդրանիկութիւնը ծախեց: Եւ, ինչպէս գիտէք, երբ յետոյ ուզեց հօրը օրհնութեամբ վերստին անդրանիկութեան իրաւունքին տիրանալ՝ մերժուեցաւ, եւ հակառակ իր ինդրանքներուն ու թափած արցունքներուն, կացութենէն բան չկրցաւ փոխել:

**ՄԻԱՄՆԱԲԱՐ ԱՂՕԹԵՆՔ**

**ԽԱՂԱՂ ԿԵԱՆՔ ԽՆԴՐԵԼՈՒ ԱՂՕԹԸ**

Կեանքի առաջնորդող եւ խաղաղութիւն պարգեւող մեր Աստուածը, Քրիստո՛ս, դո՛ւն առաջնորդէ մեզ, որպէսզի արդարութեան քու ողորմութեամբդ՝ խաղաղութեամբ հասնինք կեանքի եւ փրկութեան նաւահանգիստը. որովհետեւ դո՛ւն եւ մեր օգնականն ու փրկիչը: Քեզի կը վայելեն փառքը, իշխանութիւնն ու պատիւը, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն: